Հավելված
Հաստատված է Շատին համայնքի
Ավագանու 16.01.2013թ. №6 Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2013-2016 թթ.ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Մամիկոն Սմբատյանը

2013թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի,նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4.Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5.Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:

Հավելված-1. Համայնքի գյուղապետարանի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:
Հավելված-2. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

Ի՞ՆՉ Է՝ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է,որը մշակվում է համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից,քննարկվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման,ֆինանսական,տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն,որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացում:

1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Աշխարհագրական դիրքը և համառոտ պատմական ակնարկ

Մակերես՝ 33,25կմ²

Շատին գյուղը վերաբնակեցվել է 1828թ. Պարսկաստանի Սալմաստ գավառից ներգաղթված հայ ընտանիքներով: Գյուղն ունի հին պատմություն, ինչի մասին վկայում են գյուղում գտնվող վանքերն ու մատուռները:
Գյուղի տարածքում է գտնվում երբեմնի Եղեգիս քաղաքի ավերակները,Աղվանք և Բազելիկ եկեղեցիները, Շատիվանք եկեղեցի-համալիրը: Գյուղի տարածքում է գտնվում Ավարայրի ճակատամարտից նահանջած հայրենասեր մարտիկների գերեզմանները,որոնք նահանջի ճանապարհին մարտի են բռնվել պարսիկների հետ: Այդ փաստն են վկայում Անգեղի, Սուրբ Աստվածածին և գյուղի այլ տարածքներում գտնվող մատուռները:
Գյուղը ծովի մակարդակից բարձր է 1300-1350 մ, այն ունի գեղեցիկ դիրք: Արևելյան կողմից գյուղի վրա կախված են ժայռակազմ լեռների բազմաստուն ճակատները: Գյուղի տարածքը ձգվում է Եղեգիս գետի երկայնքով,նրա երեք վտակների հատման տեղում: Գեղեցիկ բնաշխարհ ունի: Բնակչության զբաղմունքն անասնապահությունն ու հողագործությունն է: Ցանկացած պտուղ,հատապտուղ, բանջարեղեն աճում է այս տարածքում:
Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 12 կմ հեռավորության վրա :Գյուղով անցնում է մարզկենտրոնն ութ գյուղերին միացնող միջմարզային ճանապարհը և դեպի Սևանի ավազան տանող բարեկարգ ճանապարհը:
Գյուղով է անցնում „Հերմոն-Ելփին" ոռոգման ջրատարը, որի շնորհիվ հնարավոր է ոռոգելի դարձնել համայնքի շուրջ 200 հա տարածք: Բնակչության զբաղմունքն անասնապահությունն ու հողագործությունն է: Ցանկացած պտուղ,հատապտուղ, բանջարեղեն աճում է այս տարածքում:
Համայնքի տարածքում կան հանքային հանածոներ՝ շինարարական քար՝գրանիտ,տրավերտին:
Համայնքի վարչական տարածքը 3325 հա է,այդ թվում՝ տնամերձի ֆոնդը՝ 75 հա,գյուղ նշանակության հողերը՝1085 հա:
Ներհամայնքային փողոցների և ճանապարհների ընդհանուր երկարությունը 20800 մ է,որից ասֆալտապատ՝4500, մնացած մասը գրունտային է:
Գյուղում գործում է մեկ միջնակարգ դպրոց,առողջության կենտրոն,մշակույթի տուն,գրադարան:
Գյուղի բնակչությունը որպես հանգստի գոտի օգտագործում է Եղեգիս գետի հունին կից ծառապատ ազատ տարածությունները:

Ժողովրդագրություն

Համայնքի բնակիչների թիվը 2068,այդ թվում՝

- Կանայք
- Տղամարդիկ 961
- Թոշակառուներ 1107
- երեխաներ 0-6տ. 177

- Դպրոցականներ 7-17տ. 455
- Միակողմանի ծնողազուրկ երեխաներ 30
- Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ -
- Հաշմանդամներ 70
- Զոհվածների ընտանիքներ 2
- Աշխատունակ բնակչության թիվը 1436

Գյուղն ունի 721 ծուխ,որոնցից 110 ընդգրկված են „փարոս" համակարգում

Տեղական ինքնակառավարման մարմինները

Գյուղը կառավարում է համայնքի ղեկավարի (գյուղապետի) կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ:Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով

- Տեղակալ 1 դրույք
- Աշխատակազմի քարտուղար 1 դրույք
- Գլխավոր մասնագետ հաշվապահ 1 դրույք
- Գլխավոր մասնագետ Ֆինանսիստ 1 դրույք
- Գլխավոր մասնագետ գյուղատնտես 1 դրույք
- Առաջատար մասնագետ 1 դրույք
- Խորհրդական 1 դրույք
- Քարտուղար- գործավար 1 դրույք
- Անասնաբույժ 1 դրույք
- Օպերատոր 1 դրույք
- Հավաքարար 1 դրույք

Համայնքի ենթակառույցներն են՝

Մշակույթի տուն

- Տնօրեն 1 դրույք
- Գեղ.մաս.վար 1 դրույք
- Հավաքարար 0.5դրույք

Գրադարան

- Գրադարանի վարիչ 1 դրույք
- Պահակ 0.5դրույք

Աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 16 հոգուց:Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառույցների կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ.թիվ 51 որոշմամբ հետևյալ կազմով (տես հավելված 2)՝

- Վարչական շենք 1 միավոր
- Մշակույթի տուն 1
- Գրադարան 1
- Ջրմուղի ցանց 1

- Ոռոգման ցանց

Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացավ:Ոռոգման ցանցը վերանորոգման կարիզ ունի:
Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիզ ունի:Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 20 կմ ճանապարհ և փողոցներ:

Շրջակա միջավայրի պահպանություն

Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով՝ մոտ 40 %-ով:
Չկան խողովակներ ու կիսախողովակներ ներքին ցանցերի վերանորոգման համար:Վճարունակ չլինելու պատճառով բնակիչներն երբեմն սեփական ծառերն են կտրում:

Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 480 առանձնատուն, 70 հազ. Քմ տարածքով:Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը 100-ից ավել է, որը տարեցտարի աճում է: Կան բազմաթիվ վթարային շենքեր,որոնք չեն վերանորոգվում:
Վթարային բնակարանների թիվը 15-ն է, կան 10 անավարտ շենքեր:

Հողատարածքների Օգտագործում

• Համայնքի վարչական տարածք	4619.29 հա,որից
• Վարելահողեր	245 հա
• Խոտհարք	18 հա
• Արոտավայրեր	541 հա
• Անօգտագործելի հողեր	2240 հա
• Ձորեր	15 հա
• Դաշտային ճանապարհներ	22 հա
• Արտադրական մաս(կովանոց)	- հա
• Ավազի հանք	- հա
• Գերեզմանոց	5 հա
• Պանսիոնատ	- հա
• Տնամերձ հողեր	75 հա
• Դպրոց	1 հա
• Հուշարձան	- հա
• Գյուղամիջյան փողոցներ	8 հա
• Սեփականաշնորհված հողեր	67 հա
• Մեկ հողաբաժին չափը	0.145 հա

Համայնքի ուժեղ կողմերը և հնարավորությունները

- Համայնքի աշխարհագրական դիրքը
- Հեռախոսակապի և հեռուստակայանի առկայությունը
- Անտառամերձ գոտու և տեսարժան վայրերի առկայությունը,տուրիզմի զարգացման հնարավորությունները
- Առևտրի հիմնական օբիեկտների առկայությունը
- Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայությունը

- Ոռոգման ներհամայնքային համակարգի առկայությունը
- Ավելի քան 120 բարձրագույն կրթությամբ մասնագետների առկայությունը
- Հուշարձանների առկայությունը

Համայնքի թույլ կողմերը

- Ներհամայնքային ճանապարհների,փողոցների վատ վիճակը
- Համայնքում առկա կիսակառույցների թիվը
- Գործազրկության բարձր տոկոսը
- Սոցիալապես անապահով բնակչության բարձր տեսակարար կշիռը
- Ոռոգման ցանցի վերանորոգման անհրաժեշտությունը
- Սակավահողությունը

Համայնքին վտանգ սպառնացող փոփոխությունները

- Վթարային շենքերի առկայությունը (4-րդ կարգի)
- Բնական աղետների (սելավներ,սահքեր,փլուզումներ) մշտական վտանգը

2.Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

- Համայնքը դարձնել բարեկարգ
- Բարելավել բնակչության սոցիալ- տնտեսական պայմանները
- Կազմակերպել առոգջ հասարակություն,բարեկեցիկ կյանք և հզոր համայնք

Առաջիկա 4 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- Բնակչությանը խմելու ջրի մատակարարման բարելավում
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների վերանորոգում
- Սելավատարների վերակառուցում
- Ոռոգման ներքին ցանցի վերանորոգում
- Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում
- Կիսակառույց թվով 10 տների ավարտում
- Մսուր – մանկապարտեզի կառուցում
- Համայնքի գազաֆիկացման կազմակերպում
- Ավարտին հասցնել փլուզման գոտում գտնվող ընտանիքների տեղափոխումը
- Խաղահրապարակի կառուցում

3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

ԾՐԱԳԻՐ 1

Հոսանքի մատակարարման ենթակայանի կառուցում

Ներածություն Վերին ,,Հոստուն ''թաղամասը կառուցվել է 90-ական թվականներին:Հոսանքի մատակարարումը տներին կատարվում է անբավարար:

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Վերջին տարիներին թաղամասի տների թիվը ավելացել է,խիստ անհրաժեշտ է հոսանքի մատակարարման ենթակայանի կառուցումը:Ընդհառաջելով թաղամասի բնակչության դիմումներին սույն ծրագրով առաջարկում ենք կառուցել հոսանքի մատակարարման ենթակայան և անցկացնել հոսանքի գծեր մինչև բնակիչների տները:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- ապահովել թաղամասին հոսանքով
- կանխել վթարները ծանրաբեռված թաղամասում

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- գտնել հովանավորներ ծրագրի կատարման համար
- կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը,համայնքի Վերին ,,Հոստուն'' թաղամասը ամբողջությամբ կապահովվի հոսանքով:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով հոսանքի մատակարարման ենթակայանի և էլ. Գծերի կառուցումը կկազմի վեց միլիոն դրամ:

ԾՐԱԳԻՐ 2

Համայնքի ներքին ճանապարհների բարեկարգում

Ներածություն

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 40 կմ-ից ավելի,որից 5-կմ-ը կենտրոնական ճանապարհն է,այն վերանորոգվել է:Երկար տարիներ չվերանորոգվելու արդյունքում փողոցները ենթակա են վերանորոգման:Նախատեսվում է վերանորոգել հիմնական փողոցները ու

ճանապարհները :Վերանորոգման արդյունքում կունենանք 16 կմ բարեկարգ ճանապարհներ և փողոցներ:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

<u>Ծրագրի հիմնական նպատակն է՝</u>

- ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին,
- վերացնել փողոցների ջրափոսերը:

<u>Ծրագրի խնդիրները</u>

- կատարել ավազի,խճաքարի և կավի խառնուրդի փռում համայնքի փողոցներում ապագայում նախատեսելով ասֆալտապատման աշխատանքներ,
- աշխատանքները կազմակերպել 2013-2016 թթ. ընթացքում

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով աշխատանքների արժեքը կկազմի մոտ տասնութ միլիոն դրամ:

Գյուղատնտեսության ցուցանիշները

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը 721
   ա.անհատական տնտեսություն 721
   բ.կոլեկտիվ տնտեսություն
   գ.պետական տնտեսություն
2. Գյուղ.արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը,ցենտներ
   ա.ցորեն -
   բ.գարի -
   գ.կարտոֆիլ 250 .0
   դ.կաղամբ -
   ե.բանջարաբոստ.կուլտուրա 420.0
   զ.կաթ 8000.0
   է.միս 600.0
   ը.բուրդ 30.0
   թ.ձու 110000 հատ
   ժ.մեղր 40,0
3. Ցանքատարածություններ հա
   ա.հացահատիկ -
   բ. Կարտոֆիլ 8,0
   գ. բանջարաբոստ.կուլտուրա 18,0
   դ.կաղամբ -
   ե.առվույտ 11,0
   զ.կորնգան -
   է.միամյա խոտեր -
4. Անասնագլխաքանակը, հատ
   ա.խոշոր եղջեր.անասուններ 984
   այդ թվում՝ կովեր 370
   բ.մանր եղջեր անասուններ 644
   այդ թվում՝ մայրեր 565
   գ.խոզեր 43
   այդ թվում՝ մայրեր 5
   դ.թռչուններ 2100
   այդ թվում հավեր 1700
   ե.մեղվաընտանիքներ
5. Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը,հատ

ա. համայնքային սեփ.	բ.մասնավոր սեփականություն	
թրթուրավոր տրակտոր՝ -	թրթուրավոր տրակտոր՝	1
անիվավոր տրակտոր՝ 1	անիվավոր տրակտոր՝	2
հացահատիկային կոմբայն -	հացահատիկային կոմբայն	-
խոտհնձիչ կոմբայն -	խոտհնձիչ կոմբայն	-
բեռն.ավտո.տարբեր մակնիշի-	բեռն.ավտո.տարբեր մակնիշի	15
տրակտորային կցասայլեր -	տրակտորային կցասայլեր	-
գութաններ -	գութաններ	2
կուլտիվատորներ -	կուլտիվատորներ	-
շարքացաններ -	շարքացաններ	-
խոտ հավաքող մեքենաներ -	խոտ հավաքող մեքենաներ	-
պ արարտանյութ ցրիչ -	կերամանրիչ	-

4.ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոն նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Համայնքում այն ունի հետևյալ պատկերը:

	Եկամուտների տեսակը	2011թ. փաստ	2012թ. փաստ.	2013թ. Կանխ.	2014թ. Կանխ.	2015թ. Կանխ.	2016թ. Կանխ.
Ա.	Հարկային եկամուտներ	2400.0	2950.0	2500.0	2450.0	2500.0	2500.0
1.	Հողի հարկ հազ.դրամ	1100.0	1300.0	1200.0	1100.0	1100.0	1000.0
2.	Գույքահարկ հազ.դրամ	1300.0	1650.0	1300.0	1350.0	1400.0	1500.0
3.	Եկամտահարկ						
4.	Այլ հարկային եկամուտներ						
Բ.	Տուրքեր	90.0	90.0	100.0	110.0	110.0	120.0
1.	Պետական տուրքեր						
2.	Տեղական տուրքեր	90.0	90.0	100.0	110.0	110.0	120.0
Գ.	Այդ թվում ոչ հարկային եկամուտներ						
1.	Պետական պահուստային հողերից վարձավճարներ						
2.	Գույքի վարձավճարներ						
3.	Տեղական վճարներ						
4.	Այլ ոչ հարկային եկամուտներ						
Դ.	Պաշտոնական տրանսֆերտներ մլն.դրամ	24.0	25.5	28.8	30.0	32.0	35.0
Ե.	Եկամուտների կապիտալի գործառնություններից						
Զ.	Տարասկզբի ազատ մնացորդ հազ դրամ	900.0	1400.0	4500.0	2000.0	2000.0	1000.0

5.ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

	Ցուցանիշներ	Չափի միավոր	2011թ. փաստ	2012թ. փաստ	2013թ. Կանխ	2014թ. Կանխ	2015թ. Կանխ	2016թ. կանխ
1.	Համայնքային տարածքը	հա	4619.29	4619.29	4619.29	4619.29	4619.29	4619.29
2.	Բնակչության թիվը	մարդ	2052	2060	2068	2075	2080	2100
3.	Ծնունդը	մարդ	21	16	25	30	32	354
4.	Մահածությունը	Մարդ		14	12	10	10	10
5.	Աշխ.ռեսուրսները,այդ թվում	մարդ	1390	1401	1436	1440	1450	1500
	ա/զբաղվածները ըստ տնտեսության ճյուղերի							
6.	Գործազրկության մակարդակը	%	2.2	2.2	2.2	2.2	2.0	2.0
7.	Առևտրի և հաս. սննդի օբիեկտների թիվը	հատ	6	6	6	8	8	9
8.	Պահուստային հողեր	հա	900	900	900	900	900	900
9.	Պահուստային հողերի իօգտագործման մակարդակ	%	20	20	20	20	25	25
10.	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	27	27	27	27	27	27
11.	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	40	40	40	40	40	40
12.	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա	35.0	35.0	35.0	35.0	40.0	40.0
13.	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	40	40	40	40	40	40
14.	Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	18	18	16	15	14	14
15.	Մասնավոր բնակարանային ֆոնդ	Հազ.քմ	75	75	75.1	75.2	75.3	75.5
16.	Բնակարիգավոր ընտանիքների թիվը	հատ	120	125	125	125	120	115
17.	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ/օր	170	165	165	165	160	155
18.	Ջրի կորուստները ցանցում	%	15	15	15	15	15	15
19.	Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում	մարդ	285	290	300	300	305	305
20.	Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	16	17	17	18	18	18

ՀԱՎԵԼՎԱԾ-1